

1.3. Գներ և սակագներ


Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2004թ. հունվար-դեկտեմբերին

(Նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	102.5	99.5	100.3	99.8	98.5	101.0
Փետրվար	99.4	108.6	97.9	100.4	101.0	99.5
Մարտ	100.3	101.9	102.4	107.7	97.2	101.1
Ապրիլ	101.2	96.1	99.8	99.7	99.8	99.5
Մայիս	101.1	102.1	99.9	98.7	99.6	102.2
Հունիս	99.9	103.8	99.96	99.5	88.5	100.9
Հուլիս	97.5	96.7	99.0	97.3	90.6	103.3
Օգոստոս	97.6	101.2	99.7	97.4	80.1	101.6
Սեպտեմբեր	99.3	99.3	99.9	99.3	101.5	97.1
Հոկտեմբեր	100.1	102.5	100.2	98.6	99.0	92.8
Նոյեմբեր	100.8	105.8	100.3	99.6	100.4	101.9
Դեկտեմբեր	102.3	105.9	99.9	99.1	107.8	100.0
Դեկտեմբերը 2003թ. դեկտեմբերի նկատմամբ	102.0	125.3	99.3	96.8	115.9*	104.6*
Հունվար- դեկտեմբերը 2003թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ	107.0	121.7	101.3	99.3	109.6	106.9

*) 2004թ. դեկտեմբերի և 2003թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:
 1) Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում երևան քաղաքում և հանրապետության մարզերում 400 անվանում պարանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:
 2) Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով: Գների ինդեքսի հաշվարկը կատարվում է ժողովնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչի (ԺՏԵՀԴ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակման փուլում է:
 3) Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:
 4) Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:
 5) Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կուլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:
 6) Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կուլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 2003-2004թթ. (Նախորդ տարվա նկատմամբ, %)



Գների միջին ամսական փոփոխությունները 2003-2004թթ. եռամսյա կտրվածքով՝ ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների ու ապրանքախմբերի


(%)

	2003թ.				2004թ.			
	I	II	III	IV	I	II	III	VI
Սպառողական գների ինդեքս	100.7	101.5	98.2	102.4	100.7	100.8	98.1	101.1
<i>այդ թվում՝</i>								
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք, ծխախոտ)	101.0	102.3	97.3	103.5	101.0	101.0	97.4	101.6
ոչ պարենային ապրանքների ծառայությունների	100.1	99.7	99.9	100.4	100.1	100.1	99.7	100.1
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս	100.6	103.6	99.6	102.7	103.3	100.6	99.0	104.8
Գների ինդեքսը շինարարությունում	100.1	99.9	100.7	100.1	100.2	99.9	99.5	100.1
Բեռնափոխադրումների սակագների ինդեքս	100.1	99.8	99.8	99.1	99.9	99.7	98.0	99.1
Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս	101.2	97.3	101.7	104.3	98.9	100.9	97.2	108.3
Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս	100.2	100.2	99.7	101.8	100.1	100.9	100.7	99.9

Արտաթուրային շուկա: 2004թ. դեկտեմբերին նույնքան համեմատ հանրապետության սպառողական շուկայում գրանցված 2.3% գնաճն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 3.3% նվազումով: 2004թ. դեկտեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների հավելաճը կազմել է 2.0%, իսկ հաշվարկային փոխարժեքի գծով գրանցվել է 14.0% նվազում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների 8.6% գնաճն ուղեկցվել է հաշվարկային փոխարժեքի 3.3% նվազումով: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը 2004թ. դեկտեմբերին կազմել է 486.26 դրամ (նախորդ տարվա դեկտեմբերին այն կազմել է 565.26 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2003-2004թթ. հունվար-դեկտեմբերին

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



Սպառողական գներ: 2004թ. դեկտեմբերին շարունակվել է հոկտեմբեր-նոյեմբերին հանրապետության սպառողական շուկայում արձանագրված գնաճի միտումը և երեք ամիսների ընդհանուր գնաճը կազմել է 3.3%, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է դեկտեմբերին՝ 2.3%:


Սպառողական գների փոփոխությունները 2004թ. դեկտեմբերին

(%)

	2004թ.		
	դեկտեմբերը		հունվար-դեկտեմբերը 2003թ. հունվար- դեկտեմբերի նկատմամբ
	2003թ. նոյեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Սպառողական գների ինդեքս <i>այդ թվում՝</i>	102.3	111.9	107.0
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	103.5	116.5	109.9
ոչ պարենային ապրանքների ծառայությունների	100.2	102.8	100.6
	99.7	103.1	101.5

Սպառողական գների հավելաճը 1995-2004թթ. դեկտեմբերին

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



Սպառողական գների ինդեքսները

(դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)

	2000	2001	2002	2003	2004
Սպառողական գների ինդեքս, ընդամենը	100.4	102.9	102.0	108.6	102.0
պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	99.8	104.1	101.9	112.4	102.8
պարենային ապրանքներ	99.4	104.2	103.2	113.5	103.3
ոգելից խմիչք և ծխախոտ	102.1	103.5	91.9	102.9	98.6
ոչ պարենային ապրանքներ	101.6	99.3	102.7	100.4	100.0
ծառայություններ	101.9	100.6	101.5	102.1	100.5

2004թ. հունվար-դեկտեմբերին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.2%, ինչը 0.5 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված համապատասխան ցուցանիշից (0.7%):

Սպառողական գների ինդեքսը 2003-2004թթ.


(%)

	Ընդամենը		այդ թվում					
	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	պարենային ապրանքներ		ոչ պարենային ապրանքներ		ծառայություններ	
			նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2003թ.								
Հունվար	104.1	104.1	106.7	106.7	100.4	100.4	100.4	100.4
Փետրվար	98.5	102.5	97.6	104.2	99.7	100.1	100.1	100.5
Մարտ	99.5	102.1	99.2	103.3	100.3	100.4	99.9	100.4
I եռամսյակ	102.1 ¹		103.3 ¹		100.4 ¹		100.4 ¹	
Ապրիլ	102.0	104.2	103.3	106.7	99.9	100.3	100.3	100.7
Մայիս	101.2	105.4	101.9	108.7	99.6	99.9	100.6	101.3
Հունիս	101.4	106.8	102.3	111.2	99.5	99.4	100.3	101.6
II եռամսյակ	104.7 ¹		107.7 ¹		99.0 ¹		101.2 ¹	
Հուլիս	94.5	101.0	91.0	101.3	99.6	99.1	100.3	101.9
Օգոստոս	97.7	98.6	96.1	97.3	100.0	99.0	100.1	102.0
Սեպտեմբեր	102.5	101.1	104.2	101.4	100.3	99.3	100.1	102.0
III եռամսյակ	94.6 ¹		91.2 ¹		99.9 ¹		100.4 ¹	
Հոկտեմբեր	99.9	101.0	99.7	101.1	100.1	99.4	99.6	101.6
Նոյեմբեր	102.2	103.3	103.7	104.8	100.5	99.9	99.8	101.4
Դեկտեմբեր	105.2	108.6	108.3	113.5	100.5	100.4	100.7	102.1
IV եռամսյակ	107.4 ¹		111.9 ¹		101.0 ¹		100.04 ¹	
2004թ.								
Հունվար	102.5	102.5	104.0	104.0	100.2	100.2	100.0	100.0
Փետրվար	99.4	101.9	99.1	103.1	100.0	100.2	99.9	100.0
Մարտ	100.3	102.2	100.3	103.4	100.0	100.2	100.5	100.5
I եռամսյակ	102.2 ¹		103.4 ¹		100.2 ¹		100.5 ¹	
Ապրիլ	101.2	103.5	101.8	105.3	99.9	100.2	101.0	101.4
Մայիս	101.1	104.7	102.0	107.3	100.2	100.3	99.6	101.0
Հունիս	99.9	104.5	99.7	107.0	100.1	100.5	100.3	101.4
II եռամսյակ	102.2 ¹		103.4 ¹		100.2 ¹		100.9 ¹	
Հուլիս	97.5	101.9	96.3	103.0	99.3	99.7	99.6	101.0
Օգոստոս	97.6	99.5	96.2	99.1	99.9	99.6	99.9	100.9
Սեպտեմբեր	99.3	98.7	98.8	98.0	100.0	99.6	99.9	100.8
III եռամսյակ	94.5 ¹		91.6 ¹		99.2 ¹		99.4 ¹	
Հոկտեմբեր	100.1	98.9	100.3	98.2	100.1	99.7	99.8	100.6
Նոյեմբեր	100.8	99.7	101.2	99.4	100.2	99.9	100.3	100.8
Դեկտեմբեր	102.3	102.0	103.8	103.3	100.2	100.0	99.7	100.5
IV եռամսյակ	103.3 ¹		105.4 ¹		100.4 ¹		99.7 ¹	

¹ եռամսյակի վերջին ամիսը նախորդ եռամսյակի վերջին ամսվա համեմատ:

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2004թ. հունվար-դեկտեմբերին

(նախորդ ամսվա համեմատ, %)



Պարենային ապրանքների գներ: 2004թ. հունվար-սեպտեմբերին պարենային ապրանքների շուկայում գրանցված տարաբնույթ գնային փոփոխություններին հոկտեմբեր-դեկտեմբերին հաջորդել է 5.4% ընդհանուր գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է դեկտեմբերին (3.8%), պայմանավորված ձկնամթերքի, ձվի, բանջարեղենի, մրգի գնաճով:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի


(նախորդ տարվա նկատմամբ, %)

	2000	2001	2002	2003	2004
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	97.8	104.2	101.2	106.1	109.9
Պարենային ապրանքներ	94.1	104.7	102.2	106.9	110.9
հացամթերք	96.7	97.6	97.9	108.6	120.0
մսամթերք	95.0	107.2	101.3	105.5	113.3
ձկնամթերք	93.7	115.0	140.2	109.2	121.5
կաթնամթերք	94.3	105.0	100.3	97.4	106.4
ձու	91.5	102.3	108.2	103.0	115.4
կենդանական և բուսական յուղ	90.4	98.3	101.5	104.0	106.0
միրգ	83.4	126.2	120.7	121.4	114.1
բանջարեղեն և կարտոֆիլ	90.9	127.0	104.3	111.0	94.4
շաքարավազ	96.6	112.7	99.4	101.9	96.8
սուրճ, թեյ, կակաո	92.0	96.5	98.4	100.3	101.2
հրուշակեղեն	96.6	98.3	101.3	101.6	102.8
այլ մթերք	97.3	97.2	99.9	99.2	101.3
ոչ ոգելից խմիչք	98.1	97.7	100.8	102.5	105.0
Ոգելից խմիչք և ծխախոտ	128.0	101.5	93.9	100.0	101.2

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2004թ. դեկտեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 9.8% գնանկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 5.9% գնաճի դիմաց:

2004թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում գրանցվել է 18.3% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է լոլիկի (2.2 անգամ), կանաչ պղպեղի (2.1 անգամ), վարունգի (1.8 անգամ), սմբուկի (56.1%) գնաճով: Նշված ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է կարտոֆիլի, գլուխ սոխի, սխտորի, գազարի, ճակնդեղի 0.6-7.8% գնաճ: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 10.7-34.6% գնաճ, ընդ որում, գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Թալինում: Մայրաքաղաքում բանջարեղենի գներն աճել են 14.3%:


Բանջարեղենի գների փոփոխությունները 2002-2004թթ. հունվար-դեկտեմբերին
(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2004թ. դեկտեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ մրգի ապրանքախմբում գրանցված 16.3% գնաճը 4.2 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (12.1%):

Մրգի ապրանքախմբում 2004թ. դեկտեմբերին նույնների համեմատ գրանցվել է 7.9% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է խաղողի (23.0%), խնձորի (17.2%), տանձի (10.4%) գնաճով: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է մրգի 2.1-15.2% գնաճ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Վաղարշապատում): Ք.Երևանում մրգի գնաճը կազմել է 7.9%:

Մրգի գների փոփոխությունները 2002-2004թթ. հունվար-դեկտեմբերին
(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2004թ. դեկտեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ մսամթերքի գնաճը կազմել է 11.6% և 2.1 տոկոսային կետով գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (9.5%): 2004թ. հունվար-հունիսին մսամթերքի ապրանքախմբում գրանցված 12.6% ընդհանուր գնաճին հուլիս-նոյեմբերին հաջորդել է 2.5% գնանկում: Դեկտեմբերին նույնների համեմատ դարձյալ արձանագրվել է 1.7% գնաճ՝ պայմանավորված խոզի (8.6%), ոչխարի (6.8%) և տավարի (2.2%) մսի գնաճով: Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում արձանագրվել է մսամթերքի 0.9-8.8% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է ք. Եղեգնաձորում), Հրազդան (Չարենցավան) և Դիլիջան քաղաքներում՝ համապատասխանաբար 0.6% և 0.3% գնանկում, իսկ ք. Վաղարշապատում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Մի խումբ պարենային ապրանքների գների համեմատությունը տավարի մսի գնի նկատմամբ

(%)

	Չափի միավորը	2003թ.				2004թ.			
		մարտ	հու-նիս	սեպ-տեմ-բեր	դեկ-տեմ-բեր	մարտ	հու-նիս	սեպ-տեմ-բեր	դեկ-տեմ-բեր
Միս տավարի	կգ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Թարմ ձուկ «սիգ»	„-„	51.9	81.5	37.6	58.4	50.6	67.7	44.3	102.8
Կաթ	լ	23.8	21.6	21.8	23.3	22.1	19.0	19.1	20.2
Պանիր «չանախ»	կգ	104.9	98.0	96.4	102.8	104.8	97.8	88.3	95.7
Կենդանական յուղ	„-„	113.1	110.2	122.3	128.3	127.9	110.6	104.3	117.2
Բուսական յուղ	լ	54.8	53.0	53.7	55.4	55.4	48.8	48.1	48.3
Չու	տասնյակ	35.1	33.2	33.6	46.4	40.4	33.6	35.1	42.3
Հաց I տեսակի	կգ	17.0	17.6	18.5	20.9	20.0	17.9	18.0	18.3
Հաց բարձր տեսակի	„-„	20.2	19.0	21.8	25.0	23.8	21.4	21.6	21.9
Մակարոն,վերմիշել	„-„	20.9	23.5	25.5	31.0	30.4	28.0	28.5	28.9
Շաքարավազ	„-„	22.6	21.6	21.5	21.0	20.2	17.8	18.0	18.5
Բրինձ	„-„	26.3	24.8	25.7	26.4	25.8	23.3	23.0	23.3
Աղ	„-„	8.2	7.8	7.9	8.1	7.8	6.9	7.0	7.2
Կարտոֆիլ	„-„	14.8	13.9	10.5	11.3	9.2	11.0	8.6	8.0
Խնձոր	„-„	28.6	34.8	16.9	21.2	21.1	30.9	22.1	23.5
Թեյ	„-„	258.8	246.4	249.4	253.4	251.2	224.1	226.0	233.8
Սուրճ	„-„	198.0	186.9	189.1	189.1	184.3	156.6	157.3	159.8

2004թ. դեկտեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ տավարի մսի գինն աճել է 14.2%, ինչով էլ, թերևս, պայմանավորվել է տավարի մսի գնի համեմատ վերոհիշյալ ապրանքատեսակների մեծ մասի գների 29.3-0.9 տոկոսային կետով նվազումը (բացառությամբ խնձորի և «սիգ» տեսակի թարմ ձկան, որոնց գները նշված ժամանակահատվածում տավարի մսի գնի համեմատ աճել են համապատասխանաբար 2.3 և 44.4 տոկոսային կետով):

Պարենային մի խումբ ապրանքատեսակների միջին տարեկան հանրապետական գները


(դրամ)

	Չափի միավորը	2000	2001	2002	2003	2004
Միս տավարի (ոսկր)	կգ	1011	1075	1112	1209	1352
Միս խոզի	- „-	1213	1386	1197	1282	1758
Կենդանական յուղ	- „-	1409	1429	1406	1407	1575
Բուսական յուղ	լ	562	527	574	654	686
Կաթ	- „-	221	252	250	275	275
Պանիր «Չանախ»	կգ	1235	1287	1283	1215	1330
Շաքարավազ	- „-	230	259	258	263	254
Բրինձ	- „-	307	308	302	311	325
Թարմ ձուկ «Սիգ»	- „-	382	439	625	676	835
Չու	տաս-նյակ	391	399	431	444	512
Հաց (I տեսակի)	կգ	211	206	203	215	254
Աղ	- „-	98	96	96	96	98
Կարտոֆիլ	- „-	107	143	154	149	121
Կաղամբ	- „-	82	125	86	99	104
Գլուխ սոխ	- „-	155	214	175	231	258
Գազար	- „-	109	166	147	161	211
Խնձոր	- „-	212	255	284	305	336
Թեյ	- „-	3189	3135	3070	3052	3181
Սուրճ	- „-	2413	2360	2338	2315	2256

Ոչ պարենային ապրանքների գներ: 2004թ. 2003թ. համեմատ ոչ պարենային ապրանքների գների ինդեքսը կազմել է 100.6%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 101.9%-ի դիմաց:

Մի խումբ ոչ պարենային ապրանքների գների ինդեքսները 2004թ. դեկտեմբերին

(2003թ. դեկտեմբերի նկատմամբ, %)




Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(նախորդ տարվա նկատմամբ, %)

	2000	2001	2002	2003	2004
Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝	103.0	100.2	100.2	101.9	100.6
հազուստ և կտորեղեն	95.4	98.7	101.8	101.7	98.6
վառելիք	111.0	98.2	100.9	119.5	106.9
կահույք	100.0	100.8	102.0	100.5	94.8
գորգեղեն	101.0	100.2	101.1	103.7	99.7
տեքստիլեղեն	96.1	102.6	98.7	99.3	99.5
կենցաղային էլեկտրաապրանքներ	99.4	100.3	98.2	96.8	97.0
խոհանոցային սպասք	97.8	100.0	102.7	102.0	98.9
լվացամիջոցներ	95.9	102.9	104.0	100.6	101.2
շինանյութեր	101.2	102.3	99.4	99.1	99.1
այգեգործական ապրանքներ	99.0	98.5	98.4	100.8	105.5
դեղամիջոցներ	90.4	107.6	93.6	94.3	99.2
անձնական օգտագործման մեքենաներ և բեմզին	131.7	98.2	96.7	108.0	110.3
մշակույթի ապրանքներ	93.9	98.1	101.5	98.8	94.2
գրենական պիտույքներ	90.7	102.6	103.4	99.5	100.9
գեղահարդարման ապրանքներ	94.9	98.4	101.3	100.8	101.0
ոսկերչական ապրանքներ	96.5	97.5	103.0	118.4	105.0
անձնապիտո ապրանքներ	98.1	98.4	100.6	100.4	98.4


2004թ. հունվար-դեկտեմբերին ոչ պարենային ապրանքների գների ընդհանուր մակարդակի վրա իրենց որոշակի ազդեցություն են ունեցել բեմզինի և դիզելային վառելիքի գնային փոփոխությունները:

Բենզինի և դիզելային վառելիքի գնային փոփոխությունները 2004թ. հունվար-դեկտեմբերին
(2003թ. դեկտեմբերի նկատմամբ, %)



Ծառայությունների սակագներ. 2004թ. դեկտեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ ծառայությունների ոլորտում գրանցվել է սակագների 0.5% հավելաճ, ինչը 1.6 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (2.1%):

Ծառայությունների սակագների փոփոխությունները 2004թ. հունվար-դեկտեմբերին
(նախորդ ամսվա նկատմամբ, %)




Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(նախորդ տարվա նկատմամբ, %)

	2000	2001	2002	2003	2004
Ծառայություններ, ընդամենը	101.5	101.3	101.1	101.9	101.5
այդ թվում՝					
կենցաղային	101.1	104.6	100.8	99.7	98.3
բնակարանային-կոմունալ	100.0	100.0	100.1	100.0	102.5
բուժսպասարկման	103.2	98.1	96.6	100.2	99.1
տրանսպորտի	100.7	101.2	100.2	104.8	101.3
կապի	99.9	101.5	110.3	107.5	101.1
մշակույթի	103.7	103.4	115.3	108.4	128.1
կրթության համակարգի	112.4	102.9	103.9	101.8	99.6
հանգստի կազմակերպման	98.7	103.1	106.2	100.2	102.1
հանրային սննդի	101.9	100.9	99.8	102.9	106.0
իրավական և բանկային	102.0	101.9	100.0	99.9	100.1

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների ինդեքսները 2004թ. դեկտեմբերին

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: 2004թ. դեկտեմբերին նույնքերի համեմատ հանրապետությունում դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է սպառողական գների 2.0-3.7% հավելած (գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք.Գյումրիում): Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 2.1%:

Սպառողական գների ինդեքսը 2000-2004թթ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, ըստ դիտարկվող քաղաքների

(%)

	2000	2001	2002	2003	2004
ԳՅ, ընդամենը	100.4	102.9	102.0	108.6	102.0
<i>այդ թվում.</i>					
Երևան	100.6	103.6	102.3	108.7	101.3
Գյումրի	101.0	102.6	102.7	106.2	104.5
Վանաձոր	100.6	101.7	101.9	109.3	103.5
Վաղարշապատ	100.9	100.4	100.7	110.0	102.5
Թալին	99.3	103.3	100.8	109.2	103.6
Ղիլիջան	100.7	101.7	100.7	109.6	102.3
Հրազդան, Չարենցավան	97.7	102.1	102.3	105.8	102.1
Եղեգնաձոր	100.6	103.9	102.9	109.3	101.8
Մարտունի	99.7	101.8	100.1	110.4	104.2
Կապան	100.7	101.4	101.1	108.3	101.8

**ՀՀ հետազոտվող բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները
դեկտեմբերի 30-ի դրությամբ**

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս- տա- վարի	Պանիր	Կա- րագ	Բուսա- կան յուղ, լիտր	Չու, տաս- նյակի համար	Շաքա- րա- վազ	Կար- տոֆիլ	Գլուխ սոխ	Կա- ղամբ	Խնձոր
2003										
ՀՀ, ընդամենը	1267	1275	1560	669	598	253	137	367	123	326
<i>այդ թվում՝</i>										
Երևան	1283	1300	1538	659	608	255	145	393	153	329
Գյումրի	1250	1288	1550	663	588	270	115	293	58	425
Վանաձոր	1233	1216	1500	655	586	233	120	375	90	310
Վաղարշապատ	1300	1200	1550	680	580	240	130	300	100	300
Թալին	1400	1200	1700	750	600	250	150	350	90	350
Դիլիջան	1250	1200	1650	700	600	255	150	300	70	400
Հրազդան, Չարենցավան	1200	1280	1550	675	575	253	130	350	90	230
Եղեգնաձոր	1300	1200	1700	650	600	240	150	300	100	300
Մարտունի	1150	1200	1700	700	600	250	85	300	50	350
Կապան	1200	1300	1660	712	550	266	148	370	80	250
2004										
ՀՀ, ընդամենը	1510	1341	1620	674	616	255	120	222	106	439
<i>այդ թվում՝</i>										
Երևան	1575	1333	1614	684	618	256	122	221	110	471
Գյումրի	1492	1333	1680	661	628	263	110	203	99	578
Վանաձոր	1425	1270	1550	617	625	245	107	262	107	345
Վաղարշապատ	1400	1300	1550	620	660	240	140	200	100	410
Թալին	1500	1400	1650	750	600	255	130	250	100	350
Դիլիջան	1400	1350	1700	650	575	261	130	230	100	300
Հրազդան, Չարենցավան	1450	1400	1620	650	580	250	115	213	100	330
Եղեգնաձոր	1400	1300	1650	650	600	250	100	200	150	300
Մարտունի	1300	1400	1700	700	600	250	90	220	90	400
Կապան	1300	1460	1640	680	600	264	138	250	100	370
Արտաշատ	1400	1222	1600	633	572	250	140	200	150	500

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2004թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6903 դրամ և 5.0%-ով գերազանցել նույնա-
նուն ապրանքատեսակների 2003թ. դեկտեմբերի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (6575 դրամ) :

2004թ. դեկտեմբերին նույնների համեմատ հանրապետության դիտարկված 4 քաղաքներում գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.5% գնաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ արձանագրվել է ք. Թալինում), 4-ում՝ 0.4-0.1% գնանկում, իսկ Վանաձոր և Մարտունի քաղաքներում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

**Որոշ ոչ պարենային ապրանքախմբերի գների փոփոխությունները
2004թ. դեկտեմբերին ըստ դիտարկվող քաղաքների**

(2003թ. դեկտեմբերի նկատմամբ, %)

	Հազուստ և կտորե- ղեն	Կոշկեղեն	Վառելիք	Դեղամի- ջոցներ	Կենցա- ղային էլեկտրա- ապրանք- ներ	Մշակույ- թի ապ- րանքներ	Գրենա- կան պի- տույքներ	Գեղահար դարման ապրանք- ներ
ՀՀ, ընդամենը	97.5	96.1	104.9	100.1	94.1	88.1	101.5	100.8
<i>այդ թվում</i>								
Երևան	96.8	94.1	107.4	102.2	92.8	86.0	101.6	100.3
Գյումրի	97.3	96.5	108.4	96.8	89.2	86.6	98.7	99.1
Վանաձոր	99.8	100.2	105.0	101.1	98.8	96.4	103.0	99.5
Վաղարշապատ	96.3	102.1	98.0	94.1	97.4	90.3	101.0	103.2
Թալին	99.9	101.4	106.6	96.1	95.8	84.7	101.5	100.0
Դիլիջան	99.4	93.9	89.6	97.0	91.9	86.0	103.2	110.1
Հրազդան, Չարենցավան	97.7	99.5	102.2	97.9	99.1	98.5	99.1	99.9
Եղեգնաձոր	98.1	97.4	102.5	102.2	92.9	89.4	99.9	102.3
Մարտունի	97.7	100.5	97.1	90.9	96.8	91.7	105.1	101.0
Կապան	103.2	94.4	100.5	101.0	96.6	85.6	102.9	104.4

2004թ. դեկտեմբերին նույնների համեմատ հանրապետության դիտարկված 6 քաղաք-ներում գրանցվել է ծառայությունների սակագների 0.2-0.5% նվազում, Մարտունի, Գյումրի, Թալին քաղաքներում՝ 0.1-0.4% հավելաճ, իսկ ք. Դիլիջանում պահպանվել է ծառայությունների սակագների նախորդ ամսվա մակարդակը:

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների
սակագների ինդեքսները 2004թ. դեկտեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ,
ըստ դիտարկվող քաղաքների**

(%)

	Սպառող- ական գների ինդեքսը	<i>այդ թվում</i>				ծառայու- թյուն- ների
		սպառողա- կան ապ- րանքների	դրանցից			
			պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների	
ՀՀ, ընդամենը	102.0	102.3	103.3	98.6	100.0	100.5
<i>այդ թվում</i>						
Երևան	101.3	101.7	102.5	98.4	99.6	99.2
Գյումրի	104.5	104.8	106.8	98.4	99.1	103.2
Վանաձոր	103.5	103.5	104.6	96.6	101.8	103.8
Վաղարշապատ	102.5	102.7	103.3	99.7	101.4	101.5
Թալին	103.6	103.1	103.6	102.1	101.1	106.0
Դիլիջան	102.3	102.8	104.2	98.5	99.1	99.8
Հրազդան, Չարենցավան	102.1	102.3	103.3	96.4	100.7	101.4
Եղեգնաձոր	101.8	101.8	101.7	101.3	102.6	101.6
Մարտունի	104.2	104.8	106.2	103.7	99.8	101.4
Կապան	101.8	101.7	102.3	97.1	101.5	102.3

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2004թ. Արտաշատ¹ քաղաքում


(Նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից՝			
			պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների	
Մարտ	100.4	100.2	100.3	100.0	99.9	101.1
Ապրիլ	102.1	102.1	102.6	100.3	101.1	102.0
Մայիս	101.9	102.2	103.0	100.4	100.0	100.6
Հունիս	99.5	99.4	99.1	98.4	100.9	100.1
Հուլիս	97.7	97.4	97.0	95.0	99.7	99.2
Օգոստոս	97.9	97.4	96.6	99.0	99.8	99.9
Սեպտեմբեր	100.2	100.2	100.0	100.6	100.9	100.0
Հոկտեմբեր	99.4	99.3	99.0	100.0	100.2	99.7
Նոյեմբեր	100.7	100.9	101.2	99.4	100.4	100.0
Դեկտեմբեր	101.7	101.8	102.5	99.9	100.0	101.4

Արդյունաբերողների արտադրանքի գներ: 2004թ. դեկտեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գնաճը կազմել է 25.3% և 4.2 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (21.1%):

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսները 2003-2004թթ.

(Նախորդ ամսվա նկատմամբ, %)



Արդյունաբերողների արտադրանքի փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի


(Նախորդ տարվա նկատմամբ, %)

	2000	2001	2002	2003	2004
Ամբողջ արդյունաբերությունը	100.8	99.6	102.5	108.9	121.7
այդ թվում՝					
էլեկտրաէներգետիկա	97.0	98.1	102.7	99.7	99.5
գունավոր մետալուրգիա	117.1	99.9	120.6	142.1	177.0
քիմիական, նավթաքիմիական	100.2	97.5	101.4	114.4	101.0
մեքենաշինություն	87.0	107.5	98.0	96.5	86.9
այլ արդյունաբերական արտադրություն (ոսկերչական արդյունաբերություն)	101.7	117.8	90.1	88.2	136.2
անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի	93.6	111.7	100.6	106.2	95.3
շինանյութերի	94.6	100.6	98.5	105.0	85.8
թեթև արդյունաբերություն	100.8	97.7	103.4	92.1	82.2
սննդի (ներառյալ ալյուրի ու համակցված կերերի)	102.5	99.0	99.5	108.1	114.1
պոլիգրաֆիական գործերի արտադրություն	124.9	92.3	104.3	99.9	120.1

¹ Արարատի մարզում (Արտաշատ քաղաքում) գների դիտարկումը կատարվում է 2004թ. փետրվարից սկսած:

Արդյունաբերողների արտադրանքի և սպառողական զների ինդեքսները 2004թ.


(2002թ. նկատմամբ, %)



Բեռնափոխադրումների սակագներ: 2004թ. դեկտեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նվազել են 3.2%, ինչը 0.1 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշից (3.3%): Նշված ժամանակահատվածում օդային և երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նվազել են համապատասխանաբար 12.5% և 11.5%, իսկ խողովակաշարային և ավտոմոբիլային տրանսպորտի զծով արձանագրվել է սակագների 5.1% և 10.7% հավելաճ:

Բեռնափոխադրումների սակագների ինդեքսները 2003-2004թթ.

(նախորդ տարվա նկատմամբ, %)




Տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները
(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս, ընդամենը	այդ թվում՝			
		երկաթուղային տրանսպորտով	ավտոմոբիլային տրանսպորտով	օդային տրանսպորտով	խողովակաշարային տրանսպորտով
		2004թ.			
Հունվար	99.8	100.0	99.0	102.1	99.2
Փետրվար	100.4	100.0	99.9	98.7	101.1
Մարտ	107.7	99.6	100.2	99.4	118.0
Ապրիլ	99.7	99.6	102.2	99.5	99.5
Մայիս	98.7	97.4	103.5	101.1	98.8
Հունիս	99.5	100.2	99.4	99.7	99.0
Հուլիս	97.3	97.4	96.6	92.4	98.1
Օգոստոս	97.4	97.1	101.4	100.8	96.8
Սեպտեմբեր	99.3	99.6	101.0	99.0	99.0
Հոկտեմբեր	98.6	98.3	100.1	99.2	98.6
Նոյեմբեր	99.6	99.2	105.6	99.0	99.3
Դեկտեմբեր	99.1	99.4	101.8	96.2	99.1

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գներ: 2004թ. դեկտեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման 15.9% գնաճ, ինչը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը 1.8 տոկոսային կետով (14.1%):

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսները

(նախորդ տարվա նկատմամբ, %)



Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսները 2004թ.


(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Ընդամենը	այդ թվում՝	
		բուսաբուծություն	անասնապահություն
Հունվար	98.5	100.0	97.8
Փետրվար	101.0	97.9	102.5
Մարտ	97.2	90.1	100.5
Ապրիլ	99.8	97.2	100.4
Մայիս	99.6	105.6	98.5
Հունիս	88.5	59.7	98.3
Հուլիս	90.6	80.6	100.6
Օգոստոս	80.1	65.5	97.1
Սեպտեմբեր	101.5	102.0	100.9

	Ընդամենը	այդ թվում՝	
		բուսաբուծություն	անասնապահություն
Հոկտեմբեր	99.0	99.0	99.0
Նոյեմբեր	100.4	97.8	102.2
Դեկտեմբեր	107.8	100.1	109.8
Հունվար-դեկտեմբերը 2003թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ	109.6	105.0	112.5

**Գյուղերի իրացման գների հնդեքսները ՀՀ մարզերում
2004թ. դեկտեմբերին, ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի**

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Գյուղատնտեսական մթերքի իրացման տարեկան միջին գները ՀՀ-ում

(դրամ)

	Չափի միավորը	2000	2001	2002	2003	2004
Ցորեն	կգ	88	92	80	107	111
Գարի	- „,-	72	73	75	91	101
Լոբի	- „,-	324	407	381	389	369
Կարտոֆիլ	- „,-	70	94	99	99	73
Կաղամբ	- „,-	45	45	41	45	47
Գազար	- „,-	44	49	57	56	71
Գլուխ սոխ	- „,-	72	72	65	100	117
Խնձոր	- „,-	81	91	117	149	150
Տանձ	- „,-	108	131	160	157	191
Խաղող	- „,-	86	101	116	190	187
Մեղր	- „,-	2473	2663	2448	2491	2572
Միս տավարի	- „,-	764	847	884	955	1073
ոչխարի	- „,-	775	853	884	936	1063
խոզի	- „,-	949	1066	901	1015	1479
Կաթ	լ	103	102	98	101	100.0
Մածուն	- „,-	167	170	173	171	175
Պանիր (յուղոտ)	կգ	767	800	757	782	848
Չու	հատ	39	39	41	42	44
Միամյա խոտեր	կգ	20	22	19	23	25
Բազմամյա խոտեր	- „,-	24	23	27	29	28

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի

(%)

	2004 թ.			2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
	դեկտեմբերը		հունվար- դեկտեմբերը 2003թ. հունվար-դեկ- տեմբերի նկատմամբ	
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. նոյեմբերի նկատմամբ		
ՀՀ, ընդամենը	115.9	107.8	109.6	109.1
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	111.8	102.5	107.8	108.9
Արարատ	117.4	108.2	113.2	111.1
Արմավիր	115.8	119.2	114.1	103.6
Գեղարքունիք	113.9	105.9	99.8	103.8
Լոռի	124.8	112.0	113.8	107.4
Կոտայք	89.0	102.0	103.5	108.7
Շիրակ	113.5	107.8	109.7	110.3
Սյունիք	106.4	107.7	103.5	110.3
Վայոց ձոր	119.8	107.3	106.2	110.3
Տավուշ	136.3	102.9	120.8	111.8

2004թ. դեկտեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է գյուղատնտեսական արտադրության միջոցների 4.6% գնման գնաճ, ինչը 1.3 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (5.9%):

Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի

(%)

	2004 թ.			2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
	դեկտեմբերը		հունվար- դեկտեմ- բերը 2003թ. հունվար-դեկտեմ- բերի նկատմամբ	
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. նոյեմբերի նկատմամբ		
ՀՀ, ընդամենը	104.6	100.0	106.9	106.6
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	109.1	100.2	109.0	105.5
Արարատ	116.8	99.6	110.1	103.4
Արմավիր	113.4	103.1	109.9	107.2
Գեղարքունիք	105.2	108.1	109.1	106.2
Լոռի	108.7	93.7	108.3	108.7
Կոտայք	109.3	105.2	99.5	106.4
Շիրակ	105.8	99.5	110.0	106.0
Սյունիք	106.5	96.7	104.8	106.7
Վայոց ձոր	111.1	99.4	109.1	104.9
Տավուշ	104.1	100.0	107.4	106.8

Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսները

(նախորդ տարվա նկատմամբ, %)

	2000	2001	2002	2003	2004
ՀՀ, ընդամենը	104.3	103.8	101.5	106.6	106.9
<i>այդ թվում՝</i>					
սերմացուներ և տնկիներ	86.3	107.3	105.6	114.5	98.4
անասուններ	89.3	120.1	108.9	104.5	109.7
էներգիա և քսայուղեր	111.6	98.7	101.1	106.0	107.8
պարարտանյութեր	77.4	165.3	82.4	119.2	104.6
բույսերի պաշտպանության միջոցներ	107.5	100.3	102.1	112.8	101.4
անասնակեր	89.3	120.7	106.5	104.1	108.3
գյուղատնտեսական մանր գործիքներ	91.1	98.4	107.7	92.7	107.0
շինանյութեր	92.5	105.8	103.1	100.6	97.6
գյուղատնտեսական վճարովի ծառայություններ	109.9	108.1	101.4	104.7	104.2
մեքենասարքավորումներ և պահեստամասեր	97.9	75.6	108.3	108.7	122.6

Արտաքին առևտրի (ներմուծման և արտահանման) գներ

Ներմուծման միջին գների (միջին արժեքի) ինդեքսները ՀՀ արտաքին առևտրում, ըստ եռամսյակների (առանց մարդասիրական օգնության)

	Ընդամենը, ըստ երկրների				այդ թվում							
					ըստ ԱՊՀ երկրների				ըստ ոչ ԱՊՀ երկրների			
	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
	<i>Մախորդ եռամսյակի նկատմամբ, %</i>											
2000¹	104.0	101.2	98.2	101.5	102.3	103.4	101.0	98.5	104.5	100.5	97.3	102.5
2001¹	102.5	96.1	99.4	96.3	107.4	90.6	96.9	104.6	101.1	97.8	100.1	94.0
2002¹	99.9	99.6	106.4	92.6	101.1	102.8	99.3	99.1	99.5	98.4	109.0	90.4
2003¹	108.6	104.1	84.2	110.3	104.1	100.8	100.3	100.5	110.7	105.6	77.4	115.6
2004¹	103.8	101.5	99.6	105.0	106.4	97.3	95.1	103.1	102.8	103.3	101.4	105.7
	<i>Մախորդ տարվա նկատմամբ, %</i>											
2000	104.0	105.3	103.4	104.9	102.3	105.8	106.8	105.2	104.5	105.1	102.3	104.8
2001	102.5	98.4	97.8	94.2	107.4	97.3	94.3	98.6	101.1	98.8	98.8	92.9
2002	99.9	99.5	105.8	98.0	101.1	103.9	103.3	102.3	99.5	97.9	106.7	96.4
2003	108.6	113.1	95.2	105.0	104.1	104.9	105.3	105.8	110.7	116.9	90.5	104.7
2004	103.8	105.4	104.9	110.2	106.4	103.5	98.4	101.5	102.8	106.2	107.7	113.8

Արտահանման միջին գների (միջին արժեքի) ինդեքսները ՀՀ արտաքին առևտրում, ըստ եռամսյակների (առանց մարդասիրական օգնության)

	Ընդամենը, ըստ երկրների				այդ թվում							
					ըստ ԱՊՀ երկրների				ըստ ոչ ԱՊՀ երկրների			
	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
	<i>Մախորդ եռամսյակի նկատմամբ, %</i>											
2000¹	98.4 ¹	107.2	100.5	97.0	101.5	100.0	101.1	106.7	97.5	109.3	100.3	94.3
2001¹	102.3	91.7	91.1	90.1	102.4	86.4	117.6	93.9	102.3	93.4	83.6	88.6
2002¹	107.6	93.9	112.9	105.3	100.3	85.2	104.5	104.8	110.2	96.7	115.3	105.4
2003¹	106.9	97.0	109.5	96.2	101.4	98.2	111.1	108.3	108.1	96.7	109.2	93.7
2004¹	102.2	98.0	100.4	98.0	99.8	115.0	81.5	97.4	102.8	94.2	105.7	98.2
	<i>Մախորդ տարվա նկատմամբ, %</i>											
2000	98.4	105.5	106.0	102.8	101.5	101.5	102.7	109.6	97.5	106.6	106.9	100.8
2001	102.3	93.9	85.6	77.1	102.4	88.5	104.1	97.8	102.3	95.5	79.9	70.8
2002	107.6	101.1	114.4	120.1	100.3	85.5	89.3	93.6	110.2	106.6	122.9	129.5
2003	106.9	103.6	113.5	109.2	101.4	99.5	110.6	119.8	108.1	104.5	114.1	106.9
2004	102.2	100.2	100.7	98.7	99.8	114.8	93.5	91.1	102.8	96.8	102.3	100.4

¹ Արտաքին եռամսյակի համար, որպես բազիսային ժամանակաշրջան, ընդունվել է մախորդ տարին:

Ներմուծման և արտահանման միջին գների փոփոխությունները ՀՀ արտաքին առևտրում,
եռամսյակներով (առանց մարդասիրական օգնության)
(1997 = 100.0)

